նում է նորա եզրներով շուրջանակի, բացի անկիւնների վարդեակներից, ակների շարուածք ունի մէջէ մէջ բոլորակ և սեղմած քառանկիւնու ձևերով, տեղ տեղ նկատելի են մինչև իսկ նրանց շրջանակները, մի հանգամանք, որ ցոյց է տալիս, թէ մեր խաչի սկզբնականը պէտք է մետաղից ձուլուած լինէր և ակներով զարդարուած. և յիրաւի, պատկերների հաղուստի ծալքերը, մազերի գանգուրները, խաչեցեալի գլխի վերայ սաւառնող աղաւնու փետուրները մատնանշում են մի այդպիսի նախատիպ. Խաչի ձևն էլ սովորական չէ. ուղղահայեաց թեւերը համեմատաբար սովորականից աւելի երկար են հորիզոնականից. ուշադրութեան արժանի է այդ կողմից յատկապէս վերին թեւը, բոմանական կոչուած խաչի նման։ Ներքևի թևի ծայրին նկատելի է կոթի կամ պատուանդանի մնացորդ, որ ցոյց է տալիս, թէ խաչն սկզբնապէս հաստատուած էր պատուանդանի վերայ, և ոչ հագցրած տախտակի մէջ, ինչպէս այժմ. գուցէ եղել է այն մի բոլորաձև բարձրութիւն, որ Գողգոթայի բլուրն էր ներկայացնում։

Աւելի կարևորը խաչից իջեցնելու տեսարանն է իւր յատկից մասերով. կեդրոնը, բնականաբար, խաչեցեալն է, որի աջ թևը պատռած է արդէն և կախուած Յիսուսի մայմինը գրկած ֆիգուրի ուսին. խաչի վերայ նկատելի է բևեռի տեղը։ Ձախ թևը տարածուած է խաչի վերայ և բևեռուած, բայց մի երկրորդ ֆիգուր ձախով բռնել է Յիսուսի բազուկը, իսկ աջով աքցանը ձգել բևեռին, դուրս քաշելու համար։ Երկու թևերն էլ արմունկից վերև տաշուած են, իսկ ձախը նաև կարկատուած։ Խաչեցեալը մերկ է և երկար սփածանելիքով միայն ծածկուած ամօթանքը։ Յիսուս գլուխը խոնարհել է քիչ դէպի աջ և խաչազարդ նիմբուս ունի. մազերը գանգուրներով իջնում են ուսերի վերայ. այտերն ու ծնոտը ծածկուած կարճ և բոլորակ մորուքով. բեխերը դէպի ցած են իջած, ծնոտի վերայ կիսաշրջան կազմելով. աչքերը փակ են և դէմքը հանգիստ(1)։ Յիսուսի դիրքը խաչի վերայ նոյնպէս բոլորովին հանգիստ է. մարմինը չի ձգուած և կանգնած է ուղիղ պատուանդանի վերայ, որ ի դէպ, նոյնպէս զարդարուած է ակնաշարքով, ինչպէս խաչի եզրներն էին։ Ոտներն ուղղուած են դէպի աջ, իրար կողքի, առանց մեխուելու. չեն երևում նաև արեան հետքեր կողքից կամ ձեռքի բևեռած տեղերից։

Խաչից իջեցնող ֆիգուրները, Յովսէփ և Նիկոդիմոս, նիմբուս չունին, որ բնորոշ աւանդութիւն է նրանց պատկերագրութեան համար. աջ կողմինը՝ Յովսէփ, ունի հարթ, վերից վար սանտրուած մազեր, իսկ ձախինը՝ Նիկոդիմոս՝ գանգուրներով խոպոպիքներ ճակատին իջած. երկուսն էլ կարճ մորուքով և բեխերը ցած իջած դէպի ծընոտը։ Յովսէփ հագել է մինչև ոտները հասնող, բարդ ծալքերով կապայ և ձախ ուսի վերայից ձգել է տոգայ. իսկ Նիկոդիմոս ունի միայն զօտևորած, դարձեալ երկար կապայ, առանց տոգայի, երկուսի բազուկներն էլ հոլանի են և ոտները մերկ. Յովսէփի ձախ ոտքը կոտրած։

Յիսուսի գլխի վերայ իջնում է թևատարած աղաւնին, իսկ աւելի բարձրից երևում է Տիրոջ աջը՝ յունա-հայկական օրհնութեամբ։

Մեր սովորական հասկացողութեան համար տարօրինակ է նախ այն հանգամանքը, որ Քրիստոս խաչուած է ոչ թէ պատժի գործիք ներկայացնող խաչափայտի վերայ, այլ գեղարուեստական որոշ զարգացում ու բնոյթ կրող խաչի, այն էլ, հաւանօրէն, ոսկերչականից այստեղ անցած։ Անշուշտ, շատ վաղ ժամանակներից խաչն այլ և այլ ձևակերպութիւններ է ստացած և զարգացանք կրել. Հռոմում Պուդենցիանայի (S. Pudenziana) Բազիլիկայի ափսիդի մոզայիկ խաչը Դ. դարի վերջերի (384–398) գործ է համարուում, զարդարուած գոյնզգոյն քարերով, թէ՛ միջին տարածութիւնը և թէ՛ եզրները(1). Բավեննայի Ս. Ապողինարի ափսիդի մոզայիկ մեծ խաչը Զ. դարից(2). կամ Հռոմի Ս. Ստեփանոսինը 648 թուից(3), զարդարուն քարերով։ Ապա յիշելի է Crux Varticanaն, Յուստին Բ.ի նուէրը, իսկական

(1) Համեմատել Մանուէլ Բ-ի նկարագրութիւնը (Ցաւել. 1)։

(1) Kraus. Gesch. der christlichen Kurst. I. գունաւոր պատկերը սկզբում։ Kondakow. Ikonographia Iesusa Xrista. 18։

(2) Diehl. Manuel d'art Byzantin. Paris. 1910. 205։

(3) Kondakow. Ikonograph. I. X. 27։